

կան բարոյագիտութիւնը կը հետեւի ինքնին *ճիշդ* ուղիի մը, որ կախեալ է ինքնին *ճիշդ* ու *բարի* սկզբունքէն. այսինքն՝ վերոյիշեալ Ա. եւ Բ. Օրինակ-ներու *սպանութիւն*ն ու *ստախօսութիւն*ը ինքնին *ճիշդ*, ինչպէս նաեւ *լաւ ու բարի* սկզբունք չըլլալով, ընդհակառակն՝ դատապարտելի ու արգիլուած ըլլալով, կարելի չէ հետեւիլ անոնց ... առանց որեւէ բացառութեան եւ երբեք նկատի չառնելով նմանօրինակ վարուելակերպէն յառաջացած հետեւանքը կամ հետեւանքները:



Կանտի բարոյագիտութեան *անպայմանական հրամայականը* (Categorical Imperative) մանրամասնելէ առաջ, հարկաւոր է պարզաբանել անոր հետ անմիջական առնչութիւն ունեցող քանի մը հիմնական հասկացութիւններ, ինչպէս՝ *բարի կամքը* (անգլ.՝ Good Will, գերմ.՝ Gute Wille), *պարտաւորութիւնը* (անգլ.՝ Duty, գերմ.՝ Pflicht), *մաքսիմը* (Maxim), *հրամայականը* (Imperative) եւ *ոսկեայ կանոնը* (անգլ.՝ Golden Rule, գերմ.՝ Goldene Regel) ...:

1. Ի՞նչ է՝ բարի կամքը

Կանտի համաձայն, միայն *բարի կամքը* կամ հայերէնով բարեհունչ՝ բարեացակամութիւնը, կարելի է առանց որեւէ սահմանափակումի *բարի* համարել: Բայց ի՞նչ է *կամքը*⁽⁵⁹⁾ եւ ինչպէ՞ս կարելի է բնորոշել՝ *բարի կամքն ու կամքի ազատութիւնը*:

Մարդկային *կամքը* յառաջ կու գայ բանականութենէն (անգլ.՝ Rationality, Reason, գերմ.՝ Vernunft) եւ հակումներէն (անգլ.՝ Tendency, գերմ.՝ Neigung), ինչպէս օրինակ հաճոյքի կամ գնահատանքի ծգտումը: Կամքը, մարդկային այն կարողութիւնն է, որ մեզ կը թոյլատրէ, որ մենք նաեւ վարուինք մեր բանական սկզբունքներուն համաձայն:

Իսկ *բարի կամքը* յառաջ կու գայ միայն բանականութենէն: Կանտ, *բարի կամքը* կը կոչէ նաեւ *գործնական բանականութիւն*: Բարի կամքը միայն *ուզելու* (*կամեցողութեան*) միջոցով է, որ բարի կը դառնայ: Վարմունքի մը արդիւնքը կամ հետեւանքը չէ որ բարոյական արժեւորման պէտք է ենթարկուի, այլ միայն այն իրողութիւնը, որ այդ վարմունքը *ուզելով* (*կամեցողութեամբ*) կատարուած է: Օրինակով մը կարելի է յստակացնել այս գաղափարը. եթէ լինի մէջ խեղդուող տղեկ մը կարելի չըլլայ փրկել, այս փրկելու ծախող փորձը չէ որ բարոյական արժեւորման պէտք է ենթարկուի, այլ այստեղ անհատին (փրկել ուզողին) բարի կամքը կայ, որ պէտք է նկատի առնուի ու բարոյապէս արժեւորուի, նոյնիսկ այն պարագային, երբ փրկութեան փորձը ծախող դուրս եկած ըլլայ:

Կանտի համաձայն, կան թերեւս կատարեալ (անթերի), բայց անպայմանօ-

(59) **Կամք** (Will) եւ **Կամքի ազատութիւն** (Free Will) հասկացութիւններուն մասին, տե՛ս նաեւ Մաս – 9, էջ 483 եւ 486: